ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 դեկտեմբերի 2014 թվականի N 75- Ա

ՎԱԶԳԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, Հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի աուդիտորկան հաշվետվությունը և հաշվի առնելով Վ. Մարգարյանի բացատրությունը՝

կարգադրում եմ.

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների և խախտումներ թույլ տալու համար «Իջևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վազգեն Մարգարյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:
2. «Իջևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վազգեն Մարգարյանին՝
   15-օրյա ժամկետում վերացնել հայտնաբերված թերություններն ու խախտումները և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջը հանձնելու պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

08 դեկտեմբեր 2014թ.
ք. Իջևան